№ 1 (209) XX ՏԱՐԻ ՅՈՒՆՒԱՐ 1910

„Droschak" ORGANE de la Fédération Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse: RÉDACTION DU JOURNAL „Droschak" GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ



ԵՂԻՇԷ ԹՈՓՋԵԱՆ

(ՍՊԱՆՒԱԾ 1909 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10 | 23-ԻՆ)

Մինչև օրս, ազատագրական պայքարների միջոցին սովորաբար չէինք կանգ առնում մեր թանկագին մեռելների վրայ. ժամանակ չը կար։ Կեանքը գնում էր արիւնագոյն յորձանքներով, բանակալութեան մանգաղը հնձում էր անդուլ ու անդուլ և հնձում էր մասսաներով... Մեր զգայարանքները վարժւել էին, բթացել էին այդ հսկայ, զանգւածային նահատակութիւններից,—և ընդհանուր, համատարած Սգի մէջ մեր գրիչը չէր էլ զօրում ծանրանալու անհատական ու նոյնիսկ կազմակերպական սգերի վրայ, չէր տրամադրում զբաղւելու կենսագրական մանրամասներով։

Ետ նայելու ժամանակ չը կար, սիրտ էլ չը կար։

Բայց այսօր մենք աւելի զգայուն ենք դէպի մեր նոր կորուստները, այսօր ամեն մի նոր նահատակութիւն ցնցում է մեզ և պէտք է ցնցէ, որովհետև անցած, կորցւած էինք համարում բռնութեան ոճիրների շրջանը, որովհետև նւաճել ենք ազատ շարժւելու և գործելու իրաւունք։

Որքա՛ն աւելի ցնցող է այս նոր ոճիրը, որ գալիս է ոչ թէ հայաջինջ բանակալութեան դահիճներից, այլ նրա դժբախտ զոհերից իսկ, մեր հարազատ միջավայրից, մեր հայկական օճախից, ուր չը նայեած ազա-

digitised by A.R.A.R.@

գրական արշալոյսի ճաճանչներին, դեռ խժում են առատութեամբ մարդակեր ու գաղափարակեր որդերը։

* * *

Շուտ գնաց մեր տարաբախտ ընկերը, դեռ նոր էր փթթել նրա ուժեղ ու եռանդոտ հոգին, դեռ նոր էր ոտք կոխել նա կեանքի փշոտ մրցարանում։ Մի քանի տարի սրանից առաջ այդ անունը յայտնի էր միայն ընկերների սահմանափակ շրջանում։

Կեանքն առանձնապէս չէր գուրգուրել նրան ուսանողական կարիէրի մէջ,—զրկանքների, նիւթական կարօտութեան խարազանը մինչև վերջն էլ հալածեց մեր խեղճ Եղիշէին—բայց նա կարողացաւ դիմագրաւել բոլոր ձախորդ պատահարներին, կարողացաւ որոշ չափով գոհացում տալ և բարձր ուսման իր անյաղթելի անձկանքին, ապա գործելու անյագ ծարաւով մտաւ ասպարէզ, արագ-արագ բարձրացաւ հասարակական գործունէութեան քանդուխով, հասաւ պատկառելի ժողովրդականութեան։

Եթէ կամենայինք վերլուծել այդ սրտաշատ վերելքի հոգեբանութիւնը, պիտի ասէինք, որ նա խթանուած է երկու հիմնական պատճառներից՝

Աշխատանք և խառնուածք։

Աշխատանքը—տէր անսովոր կարողութեան ու յարատևութեան, ըմբոստ կեանքի բոլոր ձախորդութիւնների հանդէպ։

Խառնուածքը—անպայման յեղափոխական և շիտակօրէն-մարտական։

Այդ երկու յատկութիւններով—որ կազմում են ազնուութեան ու կորովի մի գեղեցիկ ներդաշնակութիւն—Թոփչեանը իր պատուաւոր տեղն ունի հայ գործօն մտաւորականութեան ընտանիքում։

Շիտակօրէն, անկեղծօրէն-մարտական...

Բնաւորութեան մաքրութիւնը, միացած ծայրայեղ պարզութեան ու ընկերականութեան հետ՝ քիչ չը նպաստեցին այդ վաղաժամ ժողովրդականութեան։ Նրանցով փայլ ու հրապոյր էր ստանում հանգուցեալի քարոզչական ձիրքը, որ սերտ կերպով կապուած է նրա մարտական տեմպերամենտի հետ։

Թոփչեանի անհատական և հասարակական դէմքը ճանաչելու համար՝ պէտք էր տեսնել նրան 1906—1907 թուականներում, երբ խօսքի ու մամուլի յարաբերական ազատութիւնը հնարաւորութիւն էր տալիս բոլոր ձիրքերին՝ դրսևորուելու, արտայայտուելու։ Հ. Յ. Դաշնակցութիւնը ևս, ի շարս այլ կուսակցութիւնների, առաջին անգամը բեմ էր գալիս, իբրև օրինական մի մարմին, սօցիալիստական իր նախագծով, աշխատաւորական իդէալներով։

Անմոռանալի օրե՛ր... Ռուսական մեծ յեղափոխութեան ծփանքները ողողում էին ամենուրեք, անգամ երկրի խուլ ու խաւար անկիւնները։ Ծփգում էր և հայոց կեանքը, ալէկոծւում էր երիտասարդութիւնը, կարօտ նոր խօսքի ու գաղափարի, նետւում էր դէպի ազատ հրապարակները, եկեղեցիներն ու ժողովատեղերը՝ լսելու եռուն, խանդավառ ատենաբաններին։ Կովկասը մի չքնաղ մարզարան էր գաղափարների ու վարդապետութիւնների, գրիչների ու լեզուների, հրապարակախօսական ու հռետորական ձիրքերի... Հայ, ռուս, վրացի մտաւորականութիւնը ասպարէզ էին նետել իւրաքանչիւրը իր լաւագոյն ձիանները, իր պայքարող ուժերը։

Այդ կռւող մտաւորականութեան առաջին շարքերում է մեր անխոնջ Եղիշէն... Ձեռքում բռնած Դաշնակցութեան ու սօցիալիզմի կարմիր դրօշը, որ նա կրում է մի մոլեռանդ նախանձախնդրութեամբ, թափահարում է ամենուրեք, կոչ անելով աշխատաւոր ժողովրդի բոլոր ճնշուած, հարստահարուած խաւերին, մղելով նրանց դէպի փրկարար ինքնագիտակցութիւն, համախմբում ու կազմակերպում։ Միշտ զուարթ, գործելու անզուսպ ծարաւով ու անսահման պատրաստակամութեամբ՝ նա հանդէպ է գնում նոր կեանքի անթիւ ու այլազան պահանջներին, և ոչ մի արգելք չի դիմանում այդ ապառաժ-օրգանիզմի գրոհներին։

Գրող է և խօսող։ Ամեն մի հասարակութիւն իր զինուորներն ունի. Թոփչեան „մամուլի զինուոր" էր, բառիս ճշգրիտ ու համակրելի իմաստով։ Մամուլի զինուոր և—դաշնակցական մամուլի... Որքա՜ն բազմաթիւ են հայ մարտական օրաթերթի պահանջները՝ մի անգամ, յեղափոխական շրջանում... Որքա՜ն համառութիւն է պէտք՝ կառավարելու, ապրեցնելու այդ բարդ ու բազմակողմանի մեքենան—մանաւանդ յետագայում, երբ Յեղափոխութեան ալիքն իջնելով, սկսեց անդադրում, սիստեմատիկ հալածանք յեղափոխական մամուլի դէմ... Մեր ընկերը այդ բարդ, խմբագրական աշխատանքի սիւներից մէկն էր, գուցէ ամենից եռանդունը, գուցէ ամենից դիմացկունը։

Սակայն գրչի ասպարէզում չէ, որ նա վաստակեց իր [illegible]յուն դափնիները, այլ խօսքի։ Թոփչեան ժողովրդի, երիտասարդութեան սիրելին դարձաւ իր քարոզչական գործունէութեամբ։ Ժողովրդի մարդ էր նա և ժողովրդի հռետոր, պարզ, անպաճոյճ, բոլորին մատչելի։ Գիտէր դիւրութեամբ մարսել ժամանակակից գաղափարների ծուծը և աւելի ևս դիւրութեամբ գիտէր արծարծել, ժողովրդականացնել։ Լսարանները միշտ գուշագիր էին Եղիշէի առաջ, որ կաշառում էր ունկնդիրներին իր պարզ ու անկեղծ խօսքով և մանաւանդ իր թափով, իր մարտական աւիւնով։ Եւ դիւրին բան չէր այդ։ Դիւրին չէր քարոզչութիւնը հայկական մթնոլորտում, ուր կիրքը միշտ տիրական է, ուր հակառակորդութիւնը անցնում է յաճախ սկզբունքից գաղափարի հողից և թունաւորւում ու այլասերւում...

Արգելքները գոյութիւն չունէին Թոփչեանի համար։ Նա լաւ էր իւրացրել կեանքի գերագոյն իմաստութիւնը, տոկուն, անվհատ և յարատև աշխատանքի օրէնքը։ Նա մարմնացած աշխատասիրութիւն է յեղափոխական օրերի մէջ, նրանցից առաջ, նրանցից յետոյ։ Նա ամեն տեղ է և ոչ մի տեղ։ Նրան փնտրում են ամեն կողմից և դէպի ամեն կողմ հասնում է նա։ Երբե՛ք պատուանդ, դժգոհութիւն ու բողոք։ Երբեք „անձնականութեան" սուր կիրքոտ բանկուածներ։ Երիտասարդ գործիչը հետապնդում է իր ազնիւ կարիէրի նպատակակէտին՝ պարզ, անյողդ, անխոնջ, տանում է բոլոր զրկանքները—և՛ քաղց, և՛ անքնութիւն, և՛ հակառակորդների ինսինուացիաներ—մխիթարւում ու քաջալերւում է իր բազմամարդ լսարանների ջերմ ունկնդրութեամբ [illegible]ողջունուած ծափահարութիւններով...

Վաղագոյն իջաւ կոփկուեան այդ անդադար գոր-

digitised by A.R.A.R.@

ծունէութեան բեմի վրայ. տեսարանը փոխուեց... Մեր ընկերը Էրզրում է, աքսորականի վիճակում... Այդտեղ՝ նոյն ատողը հետևում է նրան, թևաւորում, փայփայում նրա ուժեղ տենչանքները, — ոչ, աւա՜ղ, ընդ երկար... նոյն սրարշաւ վերելքը. նոյն արագաքայլ ժողովրդականութիւնը։ Պարզ ու անկեղծ աշխատաւորի, պրօպագանդիստի նոյն յարատեւ հմայքն ու ազդեցութիւնը՝ երիտասարդութեան վրայ, նորաբողբոջ սերնդի վրայ... Մի տեսակ „յայտնութիւն“ այն տարաբախտ միջավայրում, որ անթիւ դարերից ի վեր ճնշակել է միայն մտաւոր խաւարի թոյնը և ստրկութեան անասնացնող մրափը...

Եւ այդտեղ, բռնութեան երէկուայ նախճիրանոցում, մեր ընկերոջը վիճակուած էր աւելի ծանր պարագաներում ցոյց տալու իր առնական կորովը, քաղաքացիական իր արիութիւնը։ Ապրիլեան տագնապալի օրերին՝ նա կանգնած է հրապարակի վրայ, իր սիրած ժողովրդի մէջ, խրախուսում, հանգստացնում է նրան իր ազդու խօսքով և ընթացքով, միաժամանակ մղում է ազգերի համերաշխութեան քարոզը—և այդ գեղեցիկ տակտն ու պաղարիւնութիւնը այդքան ահաւոր վայրկեաններում՝ քիչ չեն նպաստում հակայեղափոխական կօշմարի փարատուելուն... Մի բան, որ այսօր խանդավառ ներբողներով խոստովանում են անգամ մահմեդական բարձր պաշտօնեաները...

Չարագո՛րծ ձեռք։ Սարսափելի է մտածել, թէ ինչպէ՜ս դիւրին է նահատակելը հայոց դժբախտ երկնակամարի տակ... Դիւրին՝ անգամ ամենաերախտաւոր գործիչների համար, դիւրին՝ անգամ ամենատաղանդաւոր դէմքերի համար...

Ողբացին մեր սիրելի Եղիշէին ամեն տեղ, հայ երկրի գրեթէ բոլոր ծայրերում, ուր ճանաչել են անձնաւորութիւնը կամ գործերը։ Ողբացին առանձնապէս՝ իր կարճատև գործունէութեան վայրում—Էրզրումի մէջ, ուր հանգուցեալը հիմք էր դրել նոր սերնդի գաղափարական ու յեղափոխական դաստիարակութեան, ուր նա սիրել էր կեանքի կոչւող մատաղահաս բողբոջները և ջերմագին սիրուել նրանցից... Ամբողջ հայ երիտասարդութիւնն էր, որ ողբում էր դառն, անկեղծ շեշտերով, — բոլոր կողմերից համակիր վշտակցութեան բուռն ցոյցեր՝ թէ նահատակի, թէ կուսակցութեան հասցէին և զզւանք դաւաճանին...

Այդ բոլորը սրտառուչ է, գեղեցիկ, քաջալերող։ Բայց ի՞նչ սփոփանք... Հայոց ողբատառ ճահիճն է, որ պէտք է մաքրել հզօր, անգադրում հողմահարումներով։ Չէզոքացնել և քշե՛լ է պէտք հասարակական ասպարէզից այն անմաքուր տականքները, որոնց մթնոլորտում սնւում ու խրախուսւում են նման զազիր չարագործները։ Լռեցնե՛լ, վերջապէս, այդ անանուն ու ազգադաւ ոռնոցը մի կազմակերպութեան դէմ, որի արիւնաթաթախ ուսերի վրայ բարձրացել է միշտ և պիտի բարձրանայ ժողովրդական ինքնապաշտպանութեան պատնէշը և որի ծոցում փթթել են հայ մարտնչող հերոսութեան ամենալուսաւոր ծաղիկները։ Հակադաշնակցական, հակաժողովրդական ոսոխն է, որ պէտք է արմատախիլ անել մեր երերուն, ալէծուփ, մշտնջենական սարսափի տակ դեգերող ազգային գոյութիւնից։ Դա կը լինի և լաւագոյն յարգանքը մեր Եղիշէի յիշատակին։

---

# 1909–1910

*Il rumore d'infrante catene*
*Sullo fronte di truce tiranno*
*D'ogni suono è il più grato...*
*Garibaldi: Le Mille* *).

Կա՞յ արդեօք մի այլ իրողութիւն անցած տարուայ ընթացքում, որ իր հայկական ու տիեզերական նշանակութեամբ հաւասարուէր Աբդիւլ Համիդի գահավիժումին...

Ոչ Պարսկաստանի հերոսական ճիգը և ազատութեան փայլուն յաղթանակը, ոչ ցարական որսախուճապը կովկասահայ մտաւորականութեան դէմ, ոչ իսկ Ադանան իր սարսափելի դրամաներով՝ չեն կարող, ապահովաբար, աւելի խոր ցնցում պատճառել միջին հայի ներարգերին, քան հայակեր Բռնաւորի այդ շառաչուն տապալումը և այդ կենդանի յուղարկաւորութիւնը դէպի անարգ մոռացութիւն...

Ա՜հ, Ադանան... Քանի՞ Ադանաներ կունենայինք դեռ ապագայում, քանի՜ աւերիչ ուրագաններ դեռ պիտի անցնէին մեր տարաբախտ երկրի վրայից—ուրագաններ ջարդի, սովի, գաղթականութեան—եթէ այդ թագակիր Ներոնին շարունակէր իր տիրապետութիւնը... Քանի՜ան արդէն ունեցանք նրա օրով...

Նրա գոյութիւնը Եըլդըզի պարիսպների մէջ սոսկ ֆիզիկական բնաջնջման սպառնալիք չէր հայութեան համար—ամբողջ օսմանեան հայութեան համար—այլ և բարոյական մշտնջենաւոր մի պատիժ, մի կենդանի ու մտրակող անարգանք, մի դժոխային ու յաւիտենական պ ր ո վ օ կ ա ց ի օ ն.

Մեզ չէր վիճակուած վայելել ամբողջութեամբ այդ գեղեցիկ գահավիժման հետևանք-ցնծութիւնը։ Մենք դատապարտուած էինք այդ հանդիսաւոր, անմոռանալի ժամերին իսկ՝ սուգ հագնել ազգովին, ողբալ մեր նոր աւերակները և մեր հազարաւոր մեռելները։

Բայց այսօր, երբ մեր հորիզոնը փոքր ինչ հանդարտ ու յստակ պատկեր է ստանում, երբ արտասուքի վիթխարի հովիտները սկսում են փոքր ինչ ժպտալ սահմանադրական Արևի ճառագայթաւէտ մթնոլորտի մէջ—այսօր մենք էլ վերստանալով մեր հոգեկան անդորրութիւնը, ընդունակ ենք աւելի պաղարիւն վերաբերմունք ցոյց տալու դէպի Մարտեան անցքերը և գնահատելու կատարուած իրողութիւնը՝ իր բովանդակ արժէքով ու ծաւալով։

Դանդաղներ շատ ունինք, անշո՜ւշտ։ Բայց բողոքելով,

*) Լսեցէ՛ք շառաչիւնը այդ խորտակուող շղթաների,
Որ փշրւում են դաժան բռնաւորի ճակատին.
Կա՞յ արդեօք այս աշխարհում աւելի հաճելի երաժշտութիւն...
ԳԱՐԻԲԱԼԴԻ, Հազար։

digitised by A.R.A.R.@

դանդաղելով հանդերձ, զինւենք դարձեալ այն մեծ առաքինութեամբ, որ պատմական ճակատագիրը առատօրէն բաժին է հանել մեզ,— զինւենք հ ա մ բ ե ր ո ւ թ ե ա մ բ։

Դժգոհ ենք և նոր ռէժիմից։ Դժգոհութիւնը Երիտասարդ Թիւրքիայի դէմ ծայր է տալիս ամենուրեք, նաև Արևմուտքում, ուր Յուլիսեան օրերից յետոյ չափ ու սահման չունէին խանդավառ ներբողները օսմանեան վերանորոգիչների հասցէին։ Այդ խանդավառութիւնն իջնում է։ Զգում են, որ խաբւած են, և սկսում են եւրոպական մամուլի մէջ քննադատական հարւածները, որ երբեմն ցասման ժխոր են յարուցանում Բոսֆորի ափերին... Չափազանց ուրախալի է Երիտասարդ-Թիւրքերի այդ ծայրայեղ ա զ գ ա յ ն ո ւ թ ի ւ ն ը դէպի Արևմուտքից տեղացող քննադատութիւնները..

Չը պէտք էր խաբւել, չէր էլ կարելի խաբւել։ Յուլիսեան և Ապրիլեան յեղափոխութիւնը զուտ լ ի բ ե ր ա լ, ազատամիտ մի հոսանք չէր, ընդունւած եւրոպական իմաստով։ Զ ի ն ւ ո ր ա կ ա ն մի ուժեղ հարւած էր, որ չէր հիմնւած, տարրաքախաւարի, հասարակական ոչ մի որոշ դասակարգի վրայ, ոչ իսկ բ ո ւ ր ժ ո ւ ա կ ա ն տարրերի վրայ, որոնք ամենուրեք, առաջադիմած երկրների մէջ, հզօր կռւանն են եղել քաղաքական յեղաշրջման։ Այդ բուրժուական տարրը գրեթէ բոլորովին բացակայում է Թիւրք ու մահմեդական ընդհանրութեան մէջ և արևմտեան լիբերալիզմով առաջնորդւած միակ դասակարգը—եթէ հնարաւոր է դասակարգ անւանել—բարձր զինւորականութիւնն է, միացած փոքրաթիւ մտաւորականութեան հետ։

Եւ դա մի դժբախտ հանգամանք է, որ խորապէս անդրադառնում է օսմանեան սահմանադրութեան ճակատագրի վրայ։ Դա մի դժբախտ հանգամանք է՝ ընդհանրապէս Թիւրքիայի համար, մասնաւորապէս փոքր ազգերի համար։ Յեղափոխական փորձառութիւնը, թէև ա զ դ ե ց ո ւ թ ե ա մ բ պատկառելի, բայց թ ո ւ ո վ շատ է սահմանափակ։ Այդտեղից և—մշտնջենական երկիւղը նորանոր հակահարւածների... Միւս կողմից՝ այդ փորձառութիւնը վարակւած է ցեղական հեգեմոնիայի թոյնով։ Այդտեղ է մշտնջենական աղբիւրը ազգային հակամարտութիւնների ու հալածանքի... Փոքր ազգերը վախ ունին թէ հակահարւածների փոթորկոտ օրերում և թէ խաղաղութեան շրջանում։

Մի տեսակ բ ա ց ա ռ ի կ կ ա ց ո ւ թ ի ւ ն այսօր ամբողջ ծանրանում է ոչ-Թիւրք ազգութիւնների վրայ։ Աբդիւլ-Համիդեան մեռցնող ռէժիմից յետոյ՝ այդ ազգերը զգում են այժմ Թիւրք տարրի յարձակողական շովինիզմի լուծը։ Լայն ազատամտութեան խոստումներով հրապարակ նետւած Սահմանադրութիւնը իր մի քանի համակրելի որոշումների շարքում մէկէն ի մէկ առաջ բերեց մի այլանդակ անակնկալ—Չորրորդ յօդւածը, որ ժխտում է ամենակարևոր ձևով սահմանադրութեան էութիւնը և կռւի ու պառակտումի ձեռնոց է նետում երկրի ահագին ազգաբնակութեան։

Գանգատներ, այո՛, դեռ շատ ունինք։ Կայ սակայն, մեծ Կոշմարը, որ գալիս է չէզոքացնելու մեր բոլոր տրտունջները, մեր ամենացաւոտ վէրքերը... Արդեօք ազատւա՞ծ ենք վերջնականապէս արեան նախճիրներից... Եւ, չարագուշակ ոգիները դեռ ճախրում են գըժբախտ երկրի վրայ, տարածելով մերթ ընդ մերթ ահաւոր ու քստմնելի շշուկներ, գուշակելով նոր փոթորիկներ, ռէակցիայի նոր վերադարձ... Ոչինչ չընդունենք au tragique և խելագար վայնասունով չը ձգենք մեր երկիրը։ Բայց և պարտաւոր ենք լուրջ ընդունել երկիւղը, որպէս զի նորէն չը զոհւենք մեր զազրելի անփութութեան։ Այդ տեսակ շշուկների պարբերական տարածման հանգամանքը ինքնին արդէն մտատանջող է։ Եւ այս վիճակը —սա դեռ այլեկոծ, խռովայոյզ „փոխանցումն“ է—դեռ գուցէ երկար կը շարունակւի...

Եւ մենք այսօր — ինչպէս մարտ-ապրիլեան օրերից առաջ—դժբախտաբար դեռ հարկի մէջ ենք՝ շեփորելու ա ր թ ն ո ւ թ ե ա ն, հ ս կ ո ղ ո ւ թ ե ա ն անհրաժեշտութիւնը... Վա՜յ այն ժողովրդին, որ դիւրութեամբ մոռանում է անցեալի փորձութիւնները, վա՜յ նրան, որ չի աճապարում՝ քաղելու այդ անցքերից ստիպողական հրահանգները։

Ի՞նչ վիճակի մէջ է այսօր մեր հաւաքական ինքնապաշտպանութիւնը—ահա մեծ ու նզովեալ հարցը, որ դարձեալ ցցւում է մեր առջև այս նոր տարեմուտին... Նա դարձեալ բոլոր հարցերի կ ե ն տ ր ո ն ո ւ մ ն է, բոլորի վրայ գերակշռող, տիրապետող։ Այդ հարցը էլ պէտք է մտնենք կեանքի առօրեայ իրադարձութիւնների մէջ։ Այդ հարցը չը պէտք է մոռանան մեր ազգութեան այն տարրերը, որոնք այսօր ազատ մամուլի թևերի վրայ կրկես են մտել՝ գոտեմարտելու ժողովրդական և մարտական կազմակերպութիւնների հետ։ Վերջինները բնաւ չեն տագորւած այդպիսի վայրենի գոտեմարտութեան ախորժակներով։ Նա միանգամայն անժամանակ է և մեծ մասամբ զուրկ գաղափարական հիմունքներից ու դրդումներից։ Ցաւեր շատ կան—մի՜ ամբողջ ծո՜վ... Դ ր ս ի ուժերի դէմ է, որ պէտք է պատրաստւել, ոչ ն ե ր ս ի։ „Դուրսը“ դեռ յղի է սպառնացին փոթորիկներով և մենք.., կարծես դեռ գտնւում ենք բիւզանդական իդէոլոգների վիճակում, որ սելջուկեան ահաւոր արշաւանքի հանդէպ խորասուզւել էին ներքին յուզի, բնազանցական վէճերի մէջ...

* * *

Պ ա ր ս կ ա ս տ ա ն ի յեղափոխութիւնն ու ազատագրումը, թէ պատմական, թէ հասարակագիտական տե-

digitised by A.R.A.R.@

տակէտից, մի ուշագրաւ երևոյթ եղաւ, մի հազւագիւտ կ ո ւ ր ի օ զ։

Մի երկիր, որ դեռ երէկ թւում էր գաղափարի մի կատարեալ անապատ, ուր ծայրէ ծայր արշաւում էին վայրենաբարոյ, աւազակային հորդաները, մի այդպիսի երկրում—այդքան հզօր ու յարատև ճիգ, զուտ յեղափոխական ուժերի այդքան գեղեցիկ մի փթթում։

Դա մի կատարեալ յայտնութիւն էր շատերի համար։ Դուրս եկաւ մէկէն ի մէկ, որ՝ նորագոյն, արևմտեան գաղափարները բաւականաչափ տարածւած են պարսիկ մտաւոր սերնդի մէջ, գուցէ աւելի տարածւած, քան համակրօն տաճիկների մէջ։ Այդ թարմ, կենսարար հոսանքը փոքր ինչ յոյս ներշնչեց մեզ, որ պարսիկ նորածին սահմանադրութիւնը կը տոգորւի լայն համբերողութեան ոգով հանդէպ նաև ոչ-մահմեդական ժողովուրդների, հանդէպ հայերի, որոնց գործօն մասնակցութիւնը յեղափոխական կռիւների ու յաղթանակների մէջ՝ ակներև է... Ոչ թէ „համբերողութիւն“,—ոչ. այդ տգեղ, վիրաւորական բառը պէտք է միանգամ ընդմիշտ դուրս քշել մեր բառագրքերից... Մենք պահանջում ենք մեր մահմեդական հայրենակիցներից —պարսիկներից, ինչպէս թիւրքերից —ոչ հ ա մ բ ե ր ո ղ ո ւ թ ի ւ ն, այլ յ ա ր գ ա ն ք դէպի մեր բազմատանջ ժողովուրդը, որ ի դէմս իր գիտակից տարրերի՝ ազատագրութեան ամենազօրաւոր խթաններից մէկն է եղել սառոյց ու անշարժ Արևելքում...

⁂

Եւրոպան դժւարանում է ըմբռնել այդ անակնկալ կերպարանափոխութիւնը, փոքր ինչ à la japonaise, և իրազեկ մարդիկը հակւած են տեսնելու այդտեղ մի ինքնատիպ ու „ազատաշունչ“ կրօնի —բ ա բ ի ա կ ա ն ո ւ թ ե ա ն—խորունկ ազդեցութիւնը։ Այդ կրօնը, աւելի ճիշտ, ա ղ ա ն դ ը, ոմանց կարծիքով, կոչւած է թարմացնելու, երիտասարդացնելու բովանդակ իսլամը, որ քրիստոնէութեան պէս կաշկանդել է զանգւածների մտքերն ու կորովները ֆատալիստական համակերպութեան ու անշարժութեան մէջ։ Բաբիզմը, չէ՞ որ մի ըմբոստ է, մի révolté, որ ռուսական բազմամիլիոն աղանդների պէս չի ձգում իր պարանոցը բռնութեան առաջ, այլ դիմում է դաւադրութեան, ատրճանակի, դաշոյնի, կազմակերպում է տեռորներ։ Բաբիզմը—իր լաւատեսական աշխարհահայեացքով, իր կենսունակ իդէալներով մերժում է ցուրտ մահաշունչ ճգնութիւնն ու աշխարհուրացութիւնը և ձգտում է իրականացնել դրախտը՝ երկրի վրայ... Ահա մի բացատրութիւն։

Այսպէս պատմութիւնն, անշուշտ, գերերի արդար, անաչառ քննութեամբ, ցոյց կը տայ, թէ ինչ տեղ ունի—շիիտ ու քրիստոնեայ գաղափարական տարրերի կազմած—այդ զարմանալի աղանդը, որ իր կենսահաճ կամ հաճոյապաշտ (eudémoniste) բնաւորութեամբ իսկ՝ ըստ երևոյթին մեծ տարածում է գտնում իրանի նոր սերնդի մէջ և որ ինքը՝ հանդիսանում է մի կուրիօզ, մի հետաքրքրական ու հազւագիւտ նմուշ կրօնական անհատուր աղանդների գերդաստանում... Եւ այժմ՝ սրտի խորին գոհունակութեամբ ու հպարտութեամբ կարող ենք արձանագրել ռէակցիայի անպատիւ ջախջախումը—հպարտութեամբ՝ քանի որ մեր անձնւէր ընկերները— թէև սակաւ, բայց ազդեցութեամբ հզօր—շարունակում են տակաւին իրենց մասնակցութիւնը այդ ուշագրաւ մենամարտին։ Յեղափոխութիւնը 3—4 տարւայ արիւնալի փորձութիւններից յետոյ վերջապէս՝ յաղթական, բռնաւորը քշւած,—և այսօր կորովի սերունդը ձգտում է մարմնացնել իր աշխատաւոր գաղափարները՝ պառլամենտական կարգեր, ազատութիւն խօսքի, մամուլի, ժողովումների, բնջացում ամեն կարգի վարչական զեղծումների։ Նա ձգտում է արմատապէս բարեկարգել երկիրը, վերակազմել դպրոցները, հաստատել կանոնաւոր հաղորդակցութիւն, տարածել մի խօսքով, եւրոպական քաղաքակրթութիւնը՝ Դարեհների ու Կամբիզների հայրենիքում։

***

Ազգային բաղխումները քարոզւում են ամենուրեք։ Վաղուց նրանք ծանրագրական երևոյթների շարքն են անցած։ Չը նայելով ազատութեան առաջին օրերի գրկախառնումներին, խանդավառ ու խոստումնալից ճառերին, ազգամիջեան կռիւը բորբոքւում է դարձեալ Թ ի ւ ր ք ի ա յ ու մ—նոյնիսկ պառլամենտական հողի վրայ, կը բորբոքւի շատ հաւանականօրէն, աւելի մեծ ծաւալով նաև Ի ր ա ն ու մ։

- Այդ կարգի կռիւները զինադադար չեն ճանաչում. նրանք մղւում են անխնայ ու յարատև կատաղութեամբ, մինչև վերջնական յաղթանակ։ Իսկ „յաղթանակը“ գալիս է այն ժամանակ, երբ գոհացում է տրւում ազգայնութեան—իւրաքանչիւր պատմա-հասարակական մի միութեան—բոլոր օրինաւոր ու բնաւոր պահանջներին, երբ նրան տրւում է իրեն պատշաճ տեղը պետական ընդհանուր պաշտօնավարութեան մէջ, երբ նա գտնում է պետութեան ու կառավարութեան մի անհրաժեշտ ու անկապտելի մասնիկը։

Նոր ազատագրւած Թիւրքիայի ու Պարսկաստանի դահլիճները Եւրոպային է, որ պիտի քաղեն հրահանգներ ու օրինակներ։ Ի՞նչ ենք տեսնում այդ Եւրոպայում։ Ահա մի կողմից ամբողջ հսկայական մի պետութիւն, Աւստրօ-Ունգարիան, մատնւած քայքայման քաոսի ու անիշխանութեան—նոյն ազգային շղթայազերծւած ու չը գոհացւած պահանջների շնորհիւ։ Ունգարիան ուժ ամսից ի վեր չունի կառավարութիւն և թագաւոր-իշխանից նշանակւած բոլոր մինիստրները զարնւում են մաջառ-ազգային ներկայացուցչութեան veto-ին ու արհամարհանքին,

digitised by A.R.A.R.@

Իրենց հերթին՝ մաջառական լծի տակ հեծող փոքր ազգութիւնները — ռ ու մ է ն, խ ո ր վ ա տ և այլն — շարունակում են, ատելութեան փրփուրը բերաններին, մաքառել անխոնջ և աննկուն՝ իշխող ազգի բռնակալական ձգտումների դէմ։

Նոյնը՝ կայսրութեան միւս բաժնում, բուն Ա ւ ս տ ր ի ա յ ի մէջ։ Նոյնը՝ ամեն տեղ։

Կայ աւելի ուշագրաւ մի իրողութիւն։ Աւելի քաղաքակիրթ ու առաջադէմ պետութիւններ կան — Մեծ Բրիտանիա, Գերմանիա — որոնք երկարատև ու ձախորդ փորձերից յետոյ այսօր, կարծես, մօտենում են ազգային խնդրի արդար լուծումին։ Թէ Ի ր լ ա ն դ ի ա յ ի և թէ Ա լ զ ա ս-Լ օ թ ա ր ի ն գ ի ա յ ի մասին շատ խօսեցին անցեալ տարուայ ընթացքում։ Ասքուիթ ընդդիմութիւններից առաջ հանդիսաւոր խօսք տուեց, որ պիտի աշխատէ իրագործել իռլանդացիների դարաւոր պահանջը՝ ինքնավարութիւնը, Home Rule-ը։

Աւելի հետաքրքրական է Էլզաս-Լօտարինգիայի խնդիրը։ 40 տարուց ի վեր դիկտատորութեան ու բացառիկ օրէնքների լուծը ծանրացած է այդ դժբախտ երկրի վրայ, որ հոգով, սրտով շղթայուած է Մեծ Ֆ ր ա ն ս ի ա յ ի հետ։ 40 տարուց ի վեր պրուսական Թագաւորի պաշտօնեաները, յենուած ժ ա ղ թ ո ղ ի բռնակալ իրաւունքի վրայ, ճգնում են դուրս մղել այդ փոքրիկ ժողովրդի գիտակցութիւնից այն ամենը, ինչ որ ֆրանսիական է. անզօր հալածանքի էր ենթարկւած մանաւանդ վ ե ղ ո ւ ն — ֆ ր ա ն ս ե ր է ն ը։ Եւ ստոյն — ապարդիւն։ Գ ե ր մ ա ն ա ց մ ա ն, ձուլման քաղաքականութիւնը տխուր ու սկանդալային ֆիասկօ կրեց և այսօր արդէն լսւում են ամենից հեղինակաւոր ձայներ նոյնիսկ Գերմանիայում, նոյնիսկ բարձր պաշտօնական շրջաններում, ի նպաստ Էլզասեան ինքնօրինութեան ու ինքնավարութեան։ Մի շարք ազդեցիկ պատգամաւորներ Ռայխստագի մէջ — նոյնիսկ բիսմարկապաշտ նացիոնալ-լիբերալների թւին պատկանող — ծանուցին անցեալ տարի, որ գերմանական քաղաքականութիւնը նւաճւած և ըմբոստ Reichsland-ի մէջ հիմնականապէս պէտք է փոփոխւի և որ նրանք ոչինչ չունին նոյնիսկ ավտօնօմիայի, ինքնօրինութեան դէմ... Առ այժմ պետական նոր կանցլերը շարունակում է հին ռէժիմը, բայց խնդիրը հասունացած է և նրա լուծումը ոչ շատ հեռու...

Եւ այդ լուծումը — որ միակն է ազգային վառ տենչանքներին գոհացում տալու համար — առաջ կը բերէ հսկայական փոփոխութիւն ամբողջ միջազգային կացութեան մէջ։ Նա կը հաշտեցնի երկու ոխերիմ հակառակորդներին — Ֆրանսիային ու Գերմանիային — որոնց խուլ ու անդադար հակամարտութիւնը մէկն է համաշխարհային խաղաղութեան ամենաահաւոր վտանգներից։

Tandem bona causa triumphat. „Լաւ, արդար դատը վերջիվերջոյ յաղթանակում է“... Այդպէս է վիճակւած բոլոր նման դատերին։ Հերթը կը հասնի, անշուշտ, և գերմանական Լ ե հ ա ս տ ա ն ի ն, որը նոյնպէս տրամադիր չէ հանդուրժելու բիսմարկեան լախտի հարուածների առջև, ամբողջ մէկուկէս դար ազգովին դիմադրում է պանգերմանիզմի ձուլարար հոսանքին և կատաղի նախանձախնդրութեամբ պահպանում իր ազգային սրբութիւնները, լեզուն, դպրոցը, կուլտուրան։

***

Այդպէս է ուսուցանում համաշխարհային պատմութիւնը։

Մեր գռեհիկ իշխողներն են միայն, որ շարունակում են խուլ ականջ անել պատմութեան այդ պերճախօս հրահանգներին։

Ռ ո ւ ս ա ս տ ա ն ը դեռ ազգայնական վայրենի հալածանքների երկիրն է։ Ռէակցիան այնտեղ շարունակեց հարուածել մի արիւնաուշտ կատաղութեամբ, նաև անցեալ տարուայ ընթացքում, հարուածեց միաժամանակ ներքին Յեղափոխութեանը և „օտարներին“, ազգութիւններին։ Արդէն այդ երկու կատեգորիաները — Յ ե ղ ա փ ո խ ո ւ թ ի ւ ն և Ա յ լ ա զ գ ի — հոմանիշ են ռուս բռնաւոր կամարիլլայի և նրա խնկարկու դումայական մեծամասնութեան աչքում։ Այլազգի ոչ միայն նշանակում է յեղափոխութիւն, այլ և գլխաւոր սատար յեղափոխութեան, այլ և արծարծող համառուսական մեծ հրդեհի...

Հրէաներ, հայեր, վրացիներ, լեհեր, լատիշներ, ֆիններ, մէկ տարի ևս լսեցին սև հարիւրակեան բանակից տեղացող սպառնալիքների ու լուտանքների տարափը։ Կառավարութիւն, դումա, սև-հարիւրակեան լէգէօններ շարունակեցին cause commune անել, և փոքր ազգերը դարձեալ մի անգամ ցաւով ու ցասումով յետ կքեցին ռէակցիայի այդ ներդաշնակ ու անօրինակ գրոհի առջև։

Հալածանքը մի առանձին ուժգնութեամբ ուղղւեց երկու բևեռների՝ ֆ ի ն ն ու հ ա յ ժողովուրդների դէմ։

Խե՛ղճ Ֆինլանդիա։ 1905-ին ո՛րպիսի խանդավառ յափշտակութեամբ երգեց իր անարիւն ազատութիւնը... Ինչպէ՜ս վստահ էր, որ բարբարոսութեան պղտոր հոսանքը չը պէտք է այլևս վերադառնար դէպի իր անառիկ ապառաժները։ Մ օ ն ղ օ լ ա կ ա ն ո ւ թ ե ա ն այդ ուշագրաւ բեկորը վաղուց ի վեր իրագործել է այդտեղ, այդ լերկ ու անհամբոյր ապառաժների վրայ, — շվէդ տարրի խոր ու սիրական ազդեցութեան տակ և չը նայեած ռուսական անդադրում հալածանքներին — մի սքանչելի քաղաքակրթութիւն։ Տարբեր ազգութեամբ, կրօնով, լեզւով, տարբեր հասարակական իր հաստատութիւններով՝ երկու ու կէս միլիոն այդ ժողովուրդը

digitised by A.R.A.R.@

սոսկ կրաւորական դիմադրութեամբ—որքա՜ն նմանութիւն մեր, հայկական ճակատագրին—կարողացաւ ոչ միայն անխախտ պահպանել իր ազգային սահմանները, այլ և բարգաւաճել, առաջադիմել, եւրոպականանալ, աւելի քան Ռուսաստանի որևէ այլ հատուածը: Շվէդներից նա ընդունել էր բողոքականութիւնը, քրիստոնէական բոլոր դաւանանքներից համեմատաբար նուազ յետադէմը, ընդունել էր բողոքականութեան հետ և շվէդական քաղաքակրթութիւնը: Բայց Պետրոս Մեծի ծանր թաթը մի օր իջաւ այդ ժողովրդի վրայ, խլեց նրան շվէդների ձեռքից և նետեց համառուսական ճահճի մէջ: Ֆինլանդիան, սակայն, չը ճահճացաւ, ամբողջ կայսրութեան պէս քաղաքակրթութեան փոխուած սաղմերը նա զարգացրեց մի հազուագիւտ տոկունութեամբ, շարունակելով միշտ բարձր պահել իր ուրոյն դրօշը... Ստիպեց միստիկ-ազատամիտ Ալէքսանդր I-ին՝ ստորագրել 1809-ին հռչակաւոր հրովարտակը, որով ցարերը յանձնառու էին լինում՝ յարգել այդ երկրի կրօնն ու հիմնական օրէնքները: Գրեթէ անկախութեան հռչակումն էր դա, ինքնակալութիւնը մնում էր սոսկ անձնական, անուանական:

Բայց քառորդ դարուց ի վեր փչող պօբեդօնօսցեվեան հողմը նորէն ալէկոծեց այդ փոքրիկ համայնքը և Կովկասի, Լեհաստանի, Ուկրանայի պէս, ենթարկեց „նուաճուած երկրներին" յատուկ բացառիկ օրէնքների տիրապետութեան: „Ռուսացման" անիւը երկար ճարակեց և այդտեղ: Ցիշեցէք Բոբրիկովի օրերը...

Ահա, վերջապէս 1905 թւականը իր գոռ օրերով: Ամբողջ կայսրութիւնը սասանւում է, ծայրէծայր արիւնառւում: Ֆինլանդիան դարձեալ հանդարտ է. պաղ, վարպետ, հազւագիւտ ճարպկութեամբ՝ օգտւում է նա ընդհանուր վերիվայրումից և նոյն կրաւորական դիմադրութեամբ, ցոյցերով առաջադրում հօգեվարք բռնակալութեանը իր ազգային ուրոյնութեան պահանջները... Ֆինլանդիան այդ օրերում ամենաերջանիկն է կայսրութեան բոլոր ծայրերի շրջքում: Ընդհանուր ընտրողական իրաւունք, ազատ խօսք ու մամուլ, ջոկ պարլամենտ, ռամկավարական կարգեր: Փոքրիկ ժողովուրդը անցած է համարում բռնութեան կօշմարը և կարելի ճիգ է անում՝ կորցրած ժամանակը յետ վաստկելու: Ահա ժողովրդական ներկայացուցչութիւնը ֆիննական պարլամենտում. սօցիալիստ կուսակցութիւնը իր 80 անդամներով, ամենահզօրը: Բայց որ աւելի ուշադրաւ է՝ մի տասնեակ կին ներկայացուցիչներ նստած են այդտեղ տղամարդկանց շարքում, որպէս ընտրեալներ, ժողովրդական ներկայացուցիչներ... Եզակի դէպք, պատմութեան, քաղաքակրթութեան մէջ:

Բայց ահա նորէն՝ վայրագ ասիական բազուկը... նորէն մի հարուածով օդն է ցնդում այդ գեղեցիկ ու արգասաւոր ազատութիւնը... Ֆիննական պարլամենտը բողոքում է նոր հարուածի դէմ... Հետևում է անմիջապէս լուծման հրամանը Պետերբուրգից: Նոր ընտրութիւններ, նոր պարլամենտ՝ աւելի անհաշտ ու արմատական: Նորէն լուծում... Ահա դարձեալ ընտրութիւն և դարձեալ զուտ ռամկավարական մի պարլամենտ, ուր սօցիալիստները դարձեալ ամենաուժեղ թևն են կազմում: Տարակոյս չը կայ - կը հետևի դարձեալ լուծման հրահանգը...

Եւ այդպէս, այդ փոքրիկ երկիրը դեռ կը շարունակէ դեգերել անզօր ու յուսահատ մաքառումների մէջ, միշտ աւելի և աւելի ընկրկելով դէպի յետ, դէպի կատարեալ ստրկութիւն: Ոչ մի ուրիշ ժողովրդի համար „Հոկտեմբերեան Արևի" խաւարումը այնքան զգալի ու կսկծալի չէր, ինչպէս քաղաքակիրթ ու առաջադէմ Ֆինլանդիայի համար:

Հեռու, հակադիր բևեռում՝ Կովկասն էր բռնւած ռէակցիայի յաղթական ճիրաններում...

Շիրինկինեան օրերից ի վեր տարածւող առասպելները Դաշնակցութեան „հարիւր հազարաւոր բանակի" ու պատերազմական պատրաստութիւնների մասին՝ անցեալ տարի կօնկրետ ձևակերպութիւն ստացան պաշտօնական Ռուսաստանի բերանում և Դումայի մի շարք աղմկայոյզ նիստերից ու վիճաբանութիւններից յետոյ՝ որոշեցին հրով ու սրով արշաւել դաշնակցական ուրւականի դէմ... Հազարի չափ ձերբակալութիւններ, ամբողջ հայ ինտելիգենցիան՝ բանտի մէջ: 150-ի չափ երիտասարդներ, որոնցից շատերը հասարակական գործիչներ, սպասում են դեռ իրենց դատավճռին, մատնւած բռնակալութեան ամենագռեհիկ ագենտներից մէկի, Լիժինի, քմահաճութեան:

Հայ ժողովուրդը, որ պաղ համբերատար սրտով ընդունում է այդ ծանր հարուածները, երբէք չի մոռանայ նրանց... Մի անգամ ևս նա կըզգայ, թէ որքան արժէք ունին այդ ցածոգի բռնակալութեան հռչակած խոստումները, մի աւելորդ անգամ նա կը համոզւի, որ բիւրոկրատական ռէժիմը—որի քուրայում այնքան տապակւեց 1905-906-ի նզովքի օրերում, թուրքական կազմակերպւած, վերուստ հրահանգւած արշաւանքի միջոցին—որ այդ ռէժիմը, նրա, ժողովրդի մահացու թշնամին է, նրա գոյութեան ու առաջադիմութեան խարիսխը կրծող՝ չարագործը որդը:

Մի անգամ ևս, ցաւոտ փորձերից հրահանգւելով, հայ գաղափարական երիտասարդութիւնը լրջօրէն կ'անդրադառնայ կացութեան վրայ և կը խորհէ իր անելիքը: Բարձր կանգնելով առօրեայ կեանքի մանր ու ողբալի իրադարձութիւններից—ուր այժմ յաղթական գլուխ են բարձրացրել հայատիպ ռէպտիլները և [illegible] ծափ են զարկում կառավարական հալածանքին, ուր մաքի և հոգու զազրելի գռեհկութիւնը ձգտում է

digitised by A.R.A.R.@

արտացոլելու բոլոր՝ մաքուր պաշտամունքները—Հայ երիտասարդութիւնը, երէկուայ մարտնչող ինտելիգենցիան կը ջանայ մի կողմից անդուլ քարոզչութեամբ պաշտպանել ժողովուրդը վտանգաւոր վարակումներից, լքման ու յուսահատութեան աղէտաբեր ալիքներից, միւս կողմից էլ՝ ուշի ուշով նա կը դիտէ իր շրջապատի խմորումներն ու ալեկոծումները, կը մօտենայ հարևանների գաղափարական ու մարտնչող տարրերին, ուժ կը տայ ազգերի դիմադրական համերաշխութեան։

Թւում է թէ հզօր, քայքայիչ մի հոսանք է անցնում այսօր Ռուսաստանի մէկ ծայրից միւսը։ Մտքի փտութեան ու այլասերման մի ահաւոր համաճարակ... Դրա ներկայութիւնը չէ միայն, որ հարւածում է Յեղափոխութեան գաղափարին։ Հարւածները տեղում են բոլոր կողմերից, անգամ հասարակական այն խաւերից, որոնք երէկ խնկարկում էին այդ Գաղափարին։ Գուցէ չէինք սխալւի, եթէ ասէինք, որ ահագին ռուս ընդհանրութիւնը իր ահագին մասսայականութեամբ ապրում է այսօր en grand նոյն յուսախաբութեան ու վհատումի տագնապը, որ մենք ապրել ենք Թիւրքահայաստանում մեծ ջարդերից յետոյ... Նոյն խելագար վայնասունն է բարձրացել այսօր ռուս ինտելիգենցիայի մի յայտնի մասի մէջ, անիծում, քարով են տալիս յեղափոխութիւնն ու նրա գործիչներին։

Աւա՜ղ, այո՛։ Էւոլիւսիոնի շինարար, ստեղծագործող սկզբունքի հետ յար անբաժան ընթանում է դիսոլիւսիոնի (քայքայումի) օրէնքը։ Դա կանոնն է ամբողջ պատմութեան, ամբողջ տիեզերական յառաջխաղացութեան։ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը եւ ժամանակին հայհոյւեց ու անարգւեց։ Անգամ Տէնի պէս փիլիսոփաները չը վարանեցին մեղադրեալի նստարանի վրայ նստեցնելու Ռուսսօներին ու Դիւմուլէններին։ Նոյնը երէկ մեզ մօտ էր, նոյնը այսօր՝ ռուսների մօտ։ Նայեցէք այդ Բերդիաէվներին ու Գերշենզոններին, ականջ դրէք նրանց գարշելի վայնասունին։ Երէկ նրանք համակրելի „իդէօլօգների“ շարքերում էին. իսկ այսօր իրենց խելակորոյս հակայեղափոխական վազքի մէջ նետւում են գահավէժ բռնակալութեան, կղերի ու կրօնի գիրկը... Մի արատաւոր ու ամօթալի երեւոյթ, նոյնքան քայքայիչ ու հակահասարակական, որքան արցիբաշեվեան գերհաճոյապաշտ քարոզները... Մի երեւոյթ, որ ըմբոստանում է ամեն տեսակ վերլուծումների ու բացատրութիւնների դէմ... Նայեցէք ապա այդ Ստրուվէին ու իր համհարզներին։ Դարձեալ երէկուայ կուռքերից... Ի՞նչ այլանդակ գահավիժումներ։ Ի՞նչ տարամերժ կերպարանափոխութիւն... Այդ գերմանածագում փիլիսոփան, նախկին մոլեռանդ մարքսիստը, այսօր մի մոլեգին եռանդով տապալում է իր երէկուայ սրբութիւնները, գովք է կարդում հզօր, կենտրոնացած, ռուսական—զուտ ռուսական—պետականութեանը, խարազանում է ռուս ինտելիգենցիայի, յեղափոխականների, սոցիալիստների, իբր-հակապետական, հակառուսական „աւանդութիւններն“ ու ձգտումները և անողորմ սլաքներ է նետում հրէականութեան ու այլ տարազգի էլեմենտներին, որոնք իբր թէ վտանգում են ռուսականութեան շահերը... Մեռա՞կ է արդեօք փոխակերպւած իդէօլօգը... Ոչ, նա ունի, դժբախտաբար, ջերմ համակրութիւններ նոյնիսկ „առաջադիմական“ կոչւող բանակում... Եւ նա հանդէս է գալիս իր համախոհներով, յեղափոխութեան այս անլուր տագնապի մէջ, ցարիզմի այս սանձարձակ խրախճանների ընթացքում, որպէս թշնամի յեղափոխութեան, որպէս խանդավառ փաստաբան ռուս „ինքնակալ և տիրական ազգայնութեան“...

Ահա ռուսական մտաւոր փտախտի ամենացայտուն նմուշներից մինը։

Լաւ չէ կացութիւնը և բուն յեղափոխական, սոցիալիստական բանակի մէջ։ Հին բիւզանդական ու սխոլաստիկ վիճաբանութիւնները, տոգորւած մի նեղսիրտ աղանդամոլութեամբ՝ ճարակում են բոլոր շարքերը։ Սոցիալ-դեմօկրատիան — ամենատարածւած կուսակցութիւնը—պառակտւած է 4—5 մասի, որոնք եռանդով կրծում են իրար... ոչ թէ գործնական, այլ յաճախ ամենավերացական, փիլիսոփայական, նոյնիսկ թէօլօգիական կնճիռների վրայ։ Մի նոր, ինքնատիպ աստւածաբանութիւն է դա, որ թափանցում է ռուս հեղինակաւոր մարքսիստական պարագլուխների մէջ, բայց նա նոյնքան հեռու է թշւառ, հարստահարւած ժողովրդի անմիջական պահանջների մտահոգութիւնից, որքան միւս, աւանդական աստւածաբանութիւնը։ Ողբալին այն է՝ որ „աստւածորոնման“ այդ ամուլ մարզանքներով տարւում են հէնց նրանք, որոնք երէկ խանդավառութեամբ տուել էին բուն գործնական-յեղափոխական աշխատանքին, որոնք երէկ ցնցում էին երիտասարդութիւնը „մրրկահաւերի“ ու մօտալուտ տակնուվրայումների գոռ ու ահեղ շեփորումներով...

Աստւածորոնման տենդը նոր պառակտման սաղմեր է ձգում մարքսիստական „կուռ ու կարգապահ“ հռչակւած շարքերի մէջ և ահա երեքը խոշոր դէմքերից — Գորկի, Բոգդանով, Լունաչարսկի—բացարձակ հերձւածի ու օտարակիզմի ճանապարհի վրայ...

Տխուր է... Աւելի բախտաւոր չէ սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը։ Անցեալ տարւայ մերկացումները նոր հարւած տւին նրա ուժեղ, ռազմական գիտակցութեանը։ Յայտնւեց, որ ազեֆականութեան սարսափելի պատուհասը շատ աւելի խոր ու ընդարձակ արմատներ ունի կուսակցութեան մէջ, քան կարծում էին։ Բայց անցեալ տարւայ դէպքերը այդ տեսակէտից աղէտաբեր եղան նաև միւս կուսակցութիւնների, ս.-դ.-ների, Բունդի համար։ Խախտւեց և դրանց հաւատը

digitised by A.R.A.R.@

դէպի իրենց „կուսակցական մաքրութիւնը“։ Հանդէս եկան նրանց շարքերում և՛ս մանր ու խոշոր Ազեֆներ։

Աչքառու թւական էր, բայց և, անշուշտ, փ ր կ ա ր ա ր, եթէ նայենք այլ տեսակէտից։ Տարակոյս չը կայ, որ վերջին ժամանակ յայտնագործող ազեֆական հերոսները իրենց չարագործ ներկայութեամբ յեղափոխական շարքերի մէջ, իրենց երկդիմի խաղերով մեծապէս նպաստել են մինչև օրս բռնակալութեան յաղթանակներին։ Ճիշտ է, նրանք երբեմն, իրենց յեղափոխական դաշնակիցներին մոլորեցնելու նպատակով, խաղացել են և դրական դեր, ջուր են ածել յեղափոխութեան ջրաղացի վրայ։ Ճիշտ է, Ազեֆի պատգամներով գնչւել են բռնապետութեան այնպիսի հզօր ու ահարկու սիւներ, ինչպէս Պլեվէ, մեծ իշխան Սերգի և ուրիշներ... Սակայն, դրա հետ միասին քանի՜ թանկագին երիտասարդ ուժեր են ճօճւել դահճի պարանին, քանի՜սն են շանթահարւել իրենց ձեռնարկների կէս-ճանապարհին... Անհամա՜ր...

Եւ ահա մերկապարանոց հրապարակ է դրւում այդ սարսափելի ազեֆեան չարիքը, կուսակցութիւնները ըսթափւում են—փոքր ինչ ուշ, տարաբախտաբար, բայց լաւ է ուշ... Սթափւում են, և եռանդով դիմում „մաքրագործման“ ծանր աշխատանքին...

Այդ աշխատանքը խիստ դժւարին է և նա դեռ երկար կը տևէ։ Բարեբախտաբար, բռնութեան նախկին սպասաւորներն են—նախկին հզօր ոստիկանական վարիչներ ու գործակալներ—որ գալիս են իրենց հեղինակաւոր ցուցմունքներով դիւրացնելու գաղափարական մաքրագործումի այդ պրօցէսը... Պատմութեան մի անլո՜ւր հեգնանք...

Յեղափոխական բանակի այդ քայքայուն վիճակի դիմաց՝ բռնակալութիւնը միշտ աւելի ամբարտաւանութեամբ վեր է բարձրացնում իր գլուխը։ Ստոլիպինեան ինքնատիպ սահմանադրութիւնը—Սև Դուման—պաշտօնավարում է խիստ „բնականոն եղանակով“—անընդհատ գնդակահարութիւններով ու մասսային բանտարկումներով—„հոկտեմբերեան“ մեծամասնութիւնը երբեմն անկախութեան ու ըմբոստութեան նշաններ է ցոյց տալիս, բայց ընդհանրապէս մնում է հլու սպասաւոր պալատական կամարիլլայի, բւէարկում է բիւջէները, ծածկում, վաւերացնում է բիւրօկրատական բոլոր ոճիրները՝ դիմադրական տարրերի „անհամեստ յաւակնութիւնների“ դէմ։ Գոհ են և Դումա և մինիստրներ... Կոկօվցեվի հռչակաւոր խօսքը մեր դումայական մեծամասնութեան նշանաբանն է. „Փա՜ռք Աստուծոյ, Ռուսաստանում դեռ չը կայ պարլամենտ“...

Գոհ են բոլորը, գոհ է մանաւանդ վեհապետը, որ բնաւ չի քաշւում այդ գոհունակութիւնը դէմօնստրատիվ ծանուցանելուց... Մի օր նա ընդունում ու պարգևատրում է սև-հարիւրակեան պարագլուխ Դուբրօվինին, մի այլ օր հանդիսաւոր շնորհաւորանք է յղում գեներալ Դումբաձէին, տրեպօվեան շկոլայի այդ գռեհիկ սանիկին, մի այլ անգամ—սա արդէն անլուր մի պրօվօկացիա է Ռուսաստանի ժողովուրդներին ու համամարդկային խղճմտանքին—հոկտեմբերեան Մանիֆէստի հեղինակը միջամտում է Ֆինլանդական դատավարութեան մէջ, խախտում է նրա որոշումները և ազատ հռչակում ողբացեալ Հերցենշտայնի սպանողներին, այդ սպանութեան գլխաւոր դրդիչ՝ նոյն Դուբրօվինին...

Ահա մեր վիճակը, ամբողջ Ռուսաստանի վիճակը։ Մահւան տիրապետութիւնն է դա, պատմութեան մէջ գուցէ երբէք չը տեսնւած յետադիմական մի կօշմար...

Այդ խոր, համատարած գիշերի մէջ մի ուրախութիւն անակնկալ եղաւ—թէկուզ և չնչին իր ծաւալով ու նշանակութեամբ—սօցիալիստ-յեղափոխականների նոր ժեստը, դժոխային մեքենայի պայթումը Պետերբուրգում և ամենակարող ոստիկան-հրամանատար Կարպօվի սպանումը։ Դարձեալ մի ինքնատիպ նմուշ յեղափոխական խեղաթիւրւած հոգեբանութեան։ Կեղծ Վօսկրեսենսկին կամ իսկական Պետրօվը մի մաքուր գաղափարական սօցիալիստ է, որ բաւական ժամանակից ի վեր յարաբերութեան մէջ է ամենաբարձր պոլիցիական պաշտօնների հետ... Նրանց ուշադրութիւնը այդպիսով մոլորեցնելով, կամեցել է վրէժ լուծել իր կուսակցութեան համար, Ազեֆի դաւաճանութեան համար։ Պետրօվի այդ երկդիմի դերը չի խախտում, ի հարկէ, այն ջերմ համակրանքը, որին արժանի է սօց.-յեղափոխական նոր հերոսը, որ այժմ արդէն մահացած է դահճի հարւածի տակ։ Բայց և այնպէս այդ ուշադրաւ և անսովոր դիւցազներգութիւնը իրաւացի դժգոհութիւն է յարուցանում յեղափոխական շարքերի մէջ, որոնք այսօր սկզբունքով մերժում են ոստիկան-յեղափոխականի այդ ծայրայեղօրէն վտանգաւոր, անբարոյացման ու այլասերման ենթակայ տակտիկը։

Յամենայն դէպս, վառօդի մի անախորժ թուխպ էր, որ մաղեցին սօցիալիստ-յեղափոխականները Պետերհօֆի ցնծացող բորենիների աչքերի մէջ, այնքան անակնկալ կերպով և այնքան ընկճւած, ընդարմացած մի մթնոլորտում։ Հերոսական մի նոր թռիչք էր դա այն կուսակցութեան կողմից, որ արտադրել է Ռուսաստանի ամենաշքեղ հերոսների բոյլքը։

Սօցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը առաջինն էր, որ 1901—902-ի օրերում ցնցեց ռուսական մրափող, անդորր մթնոլորտը, ասպարէզ նետելով իր հոյակապ Բալմաշօվներին։

Սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեանը գուցէ վիճակւած է—ռէակցիայի ու մրափի այս նոր շրջանում—վերստին խաղալ շեփորող ու ազատարար „մրրկահաւի“ դերը և տերրօրական ցնցող հարւածներով խորտակել համառուսական Սառոյցը...

---

digitised by A.R.A.R.@

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

### ԼԷՕՆԻԴ ՃԻՉԿՕ

Ապստամբ 19 տարեկանից, բանտարկեալ, աքսորական, տաժանակիր և, ի վերջոյ, փախստական... Ռուս յեղափոխականի մշտանջենաւոր ճակատագի՛րը... Աւելացրէք մի չնաշխարհիկ նկարագիր, մի ջինջ, բիւրեղեայ հոգի, մի անտահման անձնազոհութիւն... Մարտիրոսութիւնը՝ հիւսուած հերոսութեան հետ...

Վերջին 30 տարուայ ընթացքում համաշխարհային պատմութիւնը անսովոր կերպով հարստացաւ այդպիսի „եթերային" տիպարներով և թւում էր թէ երկու երկիրներ մատակարարեցին ամենամեծ տոկոսը այդ „գաղափար-անհատների"—Ռուսաստանը և Թիւրքայ Հայաստանը։ Հերոսների պաշտամունքը արևմտեան Եւրոպայում վաղուց արդէն դարձել է պատմութեան սեփականութիւն. բայց նա տակաւին վառ է, կենդանի՝ Ռուսաստանում. այնտեղ, տարաբախտաբար, դեռ անհատական հերոսութիւնն է տիրապետողը և ոչ զանգուածայինը։ Առաջինը, հարկաւ, պատրաստում է վերջինը։ Բայց այդ վերջինը դեռ չի ժամանել ցարերի կայսրութեան մէջ, այնպիսի ծաւալով և ուժով, որ կարողանայ վերացնել բացասական ուժերի տիրապետութիւնը և վերացնել դրա հետ միասին՝ „հերոսութեան պաշտամունքի" աղէտալի գոյապատճառը...

Լէօնիդ Էմանուիլովիչը վետերաններից էր, յեղափոխական կազմակերպութեան աւագագոյն անդամներից։ Դուք, պատմութեան դրօշակին նա փարեց ոչ-սովորական հանգամանքներում... „Մեծատան զաւակ" էր և այն էլ՝ զինուորական... Պայմաններ, որոնք սովորաբար խեղդում են, կաշկանդում ըմբոստ զաւանանքներն ու թռիչքները։ Ո՛ւր էր, թէ այդ հզօր, գրանիտեայ զանգուածը — որ կոչւում է „ռուսական բանակ" և որի կուրծքին բարձրանում է ցարիզմի ամբարտաւան ու մարդասպան տիրապետութիւնը—ո՛ւր էր, թէ նա տար առատութեամբ իր ընդարձակ ծալքերից Ճիչկօներ ու Շմիտներ... Ռուսաստանի յեղափոխութեան գառը չէր տեսնի այսպիսի մռայլ հակահարուածներ և տագնապներ...

Ճիչկօն մեծատան զաւակ էր, բայց հնազանդւելով իր մաքուր սրտի վեհանձն թափերին, վաղաժամ դրժեց իր ընտանիքի աշխարհահայեացքը և նետւեց դէպի անձնուրացների, նարօդօվոլեցիների բանակը, որի նշանաբանն էր ժողովրդի, աշխատաւորութեան ընդհանրութեան կռիւն ու ազատագրումը։ Ճիչկօն զինուորական էր, բայց լինելով ճշմարիտ մարդ, այլասէր և խաղաղասէր՝ թողեց զինուորական համազգեստը, ըմբոստացաւ աշխարհի բոլոր բռնութիւնների դէմ, գրկեց սոցիալիզմի ու աշխատանքի աւետարանը, դարձաւ յեղափոխական Ռուսաստանի ամենաթովիչ, ամենահամակրելի դէմքերից մինը։ Մենք շատ յաճախ առիթ ունեցանք վերջին տաս տարուայ ընթացքում վայելելու այդ լաւ մարդու և անխոնջ ու անձնուրաց գործիչի հասարակութիւնը,—այդ համեստ ու դժնակեաց նիհիլիստի՝ որ կարողացել էր տարիների բերդարգելութիւնից ու մօտ 10 տարուայ սիբիրեան աքսորից յետոյ՝ փախչել Եւրոպայ և վերսկսել սիրուն ու տաղանդաւոր գրչով իր քարոզչական գործունէութիւնը... իբրև հիմնադիր „Ագրարային դաշնակցութեան" և ապա անդամ սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան „Դրօշակի" խմբագրութիւնը մի անկեղծ ու հեղինակաւոր բարեկամ ունէր ի դէմս նրա,—և երբ տարիներ առաջ բորբոքւեց առաջին անգամը ռուս յեղափոխական մամուլի մէջ „ազգայնական բանակռիւը" և ազգային խնդրի արծարծումը, նա մէկն էր այն ռուսական դէմքերից, որոնք հակառակ սոց.-դեմօկրատների „կենտրոնացման" ու „ձուլման" տենչանքներին, դաւանում էր այն համոզումը՝ որ Ռուսաստանի ազգութիւնները—լեհ, հայ, վրացի, ֆինն, լատիշ և այլն—պէտք է ստանան անպայմանօրէն ընդարձակ ազգային ինքնօրինութիւն ու ինքնավարութիւն։

Որբանում է սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը, դատարկւում են հին փառահեղ ռահվիրաների տեղերը։ Կը գա՞ն արդեօք նորերն ու արժանաւորները նրանց փոխարինելու... Լավրով, Ստեպնեակ, Միխայլովսկի, Գոց, Գերշունի, Ճիչկօ... մի մի հսկաներ ու փարոսներ երիտասարդութեան համար։ „Պառաւ Տատիկը" Պետրօ-Պավլովսկի զնդաններում կենդանի թաղուած, Չայկովսկին և ուրիշները՝ նոյնպէս... Վերջին մօհիկանները մի մեծ, աշխարհադղորդ վիպերգութեան, վերջին սխրալի նմուշներ մի աննման սերնդի, որ տւեց Ժելեաբօֆներ ու Պերօվսկայաներ, որ կամեցաւ իր խօլական հարուածներով գետին փռել ամենազազան բռնապետութիւններից մինը, բայց որ ինքն ընկաւ արիւնաթաթախ ու չնչասպառ՝ պատնէշների տակ, կտակելով անխուսափելի յաղթանակի դափնիները՝ յետնորդներին...

## ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

### VII

ԼԵԶՈՒՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԵՐԻ ԷՒՕԼԻՒՑԻԱՅԻ ՄԷՋ

Ազգայնութեան տարրերների և նրա ծնող պատճառների մասին բաւական արդէն խօսեցինք։

Տեսանք, թէ որքան խոշոր տեղ ունին ազգային գոյացման պրօցէսի մէջ ընդհանուր հողը և ընդհանուր ծագումը, արիւնակցութիւնը. որոշեցինք ժառանգականութեան դերը, իբրև էապէս պահպանողական մի գործօնի՝ որը, չը նայեած անթիւ դարերի փորձութիւններին, գաղթերին, արիւնների խճողումներին, չը նայեած ժամանակի և տարածութեան նուիրած բիւրաւոր խոչընդոտներին, պահպանում է այնուամենայնիւ մի համայնքի մէջ հին նախնիքների առանձնայատուկ գծերը—թէ ֆիզիկական և թէ հոգեկան—գծեր՝ որոնք առաջացել ու կազմակերպւել են այն անյիշատակ ժամանակներում, համայնքի գոյութեան արշալոյսին, „բնական ընտրութեան" ճանապարհով, կեանքի անողոք կռւի մէջ։

Տեսանք այնուհետև, թէ ինչ ահագին ազդեցութիւն ունի զուտ բնական միջավայրը ազգերի կազմաւորման ու առաջադիմութեան պրօցէսի վրայ,—մի ազդեցութիւն, որ անհամար դարերի ընթացքում գործադրւում է տիրականօրէն, անկախ մարդկանց կամեցողութիւնից ու կարողութիւնից. խօսեցինք նաև աշխատանքի մասին, այդ վիթխարի գործօնի՝ որ գալիս է աստիճանաբար մեղմելու բնութեան այդ միահեծան տիրապետութիւնը, որ

digitised by A.R.A.R.@

Դրանց մէջ է և մեր հայկական լեզուն — ընդամէնը մի քանի միլիոն ազգաբնակութեան թարգման-օրգանը։ Ապրելով, յարատեւելով, նա, կարելի է ասել, ապրեցրել է և ազգութիւնը, ապրեցրել է նրա կուլտուրան, մթերել է և ժառանգել սերնդէ-սերունդ հայ հաւաքական մտքի համառ պաշարը, հարստութիւնը…

Բացատրեցինք քիչ առաջ լ ե զ ւ ի ու մ տ ք ի առնչութիւնը։ Տեսանք, թէ որպիսի սերտ կապերով կապւած են նրանք։ Լ օ ց ասում է իր *Mikrokosmos*-ի մէջ. „Լեզուն, ի հարկէ, չի ստեղծում մտածողութեան տարրերը, բայց նա անխուսափելիօրէն անհրաժեշտ է մտքի համար, եթէ վերջինը ուզում է շաղկապել այդ տարրերը՝ իր ընդարձակ կազմը կերտելու համար“։ Իսկ Գ ա յ գ ե ր նոյնիսկ բացականչում է չափազանցաբար. „*Ohne Sprache keine Vernunft!* „Առանց լեզւի չը կայ բանականութիւն“ *), որ փոքր ինչ յիշեցնում է Մոլեշոտի հռչակաւոր ֆրազը. „*Ohne Phosphor kein Gedanke!*“… „Առանց ֆոսֆորի չը կայ միտք“…

Լեզուն՝ ձև, միտքը՝ պ ա ր ո ւ ն ա կ ո ւ թ ի ւ ն… Լեզուն ոչ միայն միջոց է ամբարելու, պահպանելու և գործադրելու ազգային մտքի, քաղաքակրթութեան բարիքները, այլ նա ինքը հանդիսանում է, որպէս անգնահատելի մի բարիք, նա ինքնին յայտնւում է, որպէս ազգային հանճարի մի ուրոյն ստեղծագործութիւն, գեղարւեստի մի ուրոյն, անջնջելի կոթող։

Ահա թէ ինչու այնքան պատկառելի տեղ են բռնում լեզուները՝ ազգերի զարգացման, ամբողջացման ու ներդաշնակման պրոցէսի մէջ։

Ահա թէ ինչու բռնաւորները ամէն ժամանակ, երբ հաստատել են իրենց նւաճած երկրների մէջ՝ նախ ձգտել են արմատախիլ անել հպատակ ազգերի մ ա յ ր ե ն ի լ ե զ ո ւ ն։ Իրենց խոպան ուղեղներով նրանք հասկացել են բնազդօրէն, որ խօսել որևէ լեզւով՝ նշանակում է մտածել, զգալ այդ լեզւով, նշանակում է ստանալ ազգովին, հաւաքականօրէն նոյն տպաւորութիւնն ու մղումները՝ նոյն անցքերից ու իրողութիւններից, նշանակում է, հետևապէս, ի գործ դնել ա զ գ ո վ ի ն կամք ու ճիգ…

Ազգայնութեան հոգին է, որ ցոլում է լեզւի մէջ… Եւ մի ժողովուրդ, որ հասել է ինքնաճանաչութեան, մի ժողովուրդ, որ ունի իր անցեալի վառ յիշողութիւնները և իր ներկայ արժանաւորութիւնների գիտակցութիւնը,— մի այդպիսի ժողովուրդ երբէք չի թողնի, որ խլեն իր թանկագին հաւաքական աւանդը—լեզուն։

Լեզւի հետ—գ ր ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը։

Ազգերը, յանձին իրենց գիտակից տարրերի, ունեցել են միշտ ջերմ պաշտամունք իրենց սեփական գրականութեան համար։ Հարկ կա՞յ յիշատակելու բանաստեղծների, մեծ գրողների ահագին դերը ազգային ոգու դաստիարակութեան մէջ… Մի Ռասինի կամ Վօլտերի գլուխ-գործոցը խանդավառութեան անսպառ աղբիւր է եղել ամբողջ սերունդների համար։ Դանտէ, Պետրարկ, Լեօպարդի՝ Իտալիայում, Միլտոն, Շէքսպիր, Բայրօն՝ Անգլիայում, Գեօտէ, Շիլլեր՝ Գերմանիայում—իրենց անմահ երկերով, իրենց ինքնատիպ, ճոխ ու ճկուն լեզուներով մի մի հզօր ազդակներ են՝ ազգային մարմնի կազմակերպման, թարգմաններ ազգային ուրոյն տենդենցների, ձգտումների։ Նրանք կենդանի վկաներն են, ժամանակի ալիքների մէջ, իրենց հայրենիքի յարատևութեան։ Նրանք փայլում են, որպէս յուսատու փարոսներ դարերի մթութեան մէջ։

Ասել ենք արդէն, կրկնենք դարձեալ, որ լեզուն ու գրականութիւնը՝ պատմութեան ու կուլտուրայի հետ կազմում են իւրաքանչիւր ազգային համայնքի բովանդակութիւնն իսկ. առանց դրանց մարդկային համախմբումները չեն էլ կազմում ա զ գ, բառիս իսկական նշանակութեամբ, այլ դեգերում են ցեղի կամ հօրդայի աստիճանի վրայ, շարունակում են իրենց բուսական գոյութիւնը, իբրև սոսկ „բնական համայնք“ (*Naturgemeinschaft*)։

Այդ հաւաքական ու անկապտելի ստացւածքների անունով է, որ կռիւը մղւում է այսօր, անհաշտ ու մոլեգին, երկրագնդի գրեթէ բոլոր մասերում, կուլտուրական ու կիսակուլտուրական բոլոր երկրների մէջ։ Այդ կռւի վրայ մենք կ'անդրադառնանք յետագայում։

---

ցէսը (*intégration*)։ Նախնական անթիւ արմատներից ու բառերից շատերն են անհետացել, իբրեւ աւելորդ ու դուրս նետւել գործածութիւնից (որքան անմշակ ու յետամնաց է մի լեզու, այնքան առատ են նրա մէջ հոմանիշները եւ աւելորդ բառերը). այդպիսով, ուժեղ, դիմացկուն լեզուները դարձել են հետզհետէ աւելի կուռ, զտւած, ամբողջական:

*) Ասում ենք „չափազանցաբար“, որովհետեւ բ ա ն ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը յատուկ է որոշ չափով եւ անասուններին ու խուլ-համրներին:

# ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

## Ա Զ Դ

*Սրանով յայտնում ենք՝*

*Որ Գանովը բնիկ կովկասահայ է և եղել է երբեմն մեր կազմակերպական շարքերում, բայց վաղուց արտաքսւած է իր վատ ընթացքի պատճառով, և*

*Որ՝ նոյն պարոնը, այնուհետև պարսկական յեղ. շարժման ընթացքում, զանազան պատիր խոստումներով յաջողել է խաբել պարսիկ կոմիտէն և մտնել նրա շարքերը։ Բայց Ռաշտի և, վերջերս, Պօլսի կոմիտէն նրան դուրս քշեցին իրենց շարքերից՝ իբրև կասկածելի անձնաւորութիւն։*

Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

## ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

Եղիշէ Թոփչեանի ողբամահ առթիւ ստացանք հետևեալ ցաւակցական նամակը.

*„Դրօշակի“ խմբագրութեան,*

*Ամենաանկեղծ զգացմունքներով արտայայտում ենք ձեզ մեր վշտակցութիւնը՝ ունենալով միևնոյն ժամանակ յոյսը՝ տեսնել միշտ ձեր կուսակցութիւնը, անցեալի պէս և հակառակ այս անփոխարինելի կորուստին, իբր հայ ժողովրդի յեղափոխական և սօցիալիստական շարժման յառաջապահը։*

*Սօցիալիստական ողջոյններով՝*

ՌՈՒՍ ՍՕՑԻԱԼԻՍՏ-ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
**Արտասահմանեան Ներկայացուցչութիւն**

Պարիզ, 22 Նոյ., 1909

## ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ

### ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ Զ. ՆԻՍՏԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

*Համերաշխութեան Ժողովս նկատելով որ կուսակցական եւ կուսակցականներու ձեռքով հրատարակուող կարգ մը թերթեր անուանարկիչ ընթացք կը բռնեն իրարու եւ քաղաքական կուսակցութեանց նկատմամբ, միաձայնութեամբ որոշեց՝*

*Յանձնարարել այդ թերթերուն՝ դադարեցնել անուանարկիչ եւ խիստ յարձակումները, սահմանափակելով լոկ սկզբունքային քննադատութեանց մէջ։*

**Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Կեդրոնակ. Կոմիտէի Ներկայացուցիչներ**

**Ս. Դ. Հնչակ. Կուս. Ցանկ. Կեդրոն. Վարիչ Մարմնի Ներկայացուցիչներ**

**Վերակազմեալ Հնչակեան Կուս. Պոլսոյ Վարչութեան Ներկայացուցիչներ**

**Սահմանադր.-Ռամկավար Կուս. Կեդ. Վարիչ Մարմնի Ներկայացուցիչներ**

17 | 30 Նոյեմ. 1909, Պոլիս

digitised by A.R.A.R.@

